

ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՓՈԽՊԱՏՎԱՍՏՈՒՄ.

ԲԻԶՆԵՍ, ԹԵ՛ ԱՎԱԲԵԿԶՈՒԹՅՈՒՆ

«Մարդու օրգանների ապօրինի վաճառքը ցեղասպանության նոր դրսևորում է...»:

Էթան Գուլաման

Հիմնաբառեր. մարդու օրգաններ, ապօրինի վաճառք, փոխապարվաստման սև շուկա, «կարմիր շուկա», թրաֆիքինգ, փոխապարվաստումային զբոսաշրջություն

Դոնորական օրգանների կենսական անհրաժեշտությունն ու դրանց նկատմամբ առաջարկի և պահանջարկի միջև ակնհայտ անհամապատասխանությունները հանգեցրել են մարդկային օրգանների ապօրինի մատակարարման և փոխապարվաստման վերազգային բիզնեսի զարգացմանը: Եվ եթե երիկամի ու լյարդի փոխապարվաստման դեպքում հնարավոր է կամավոր հիմունքներով կամ բռնի ուժով կենդանի դոնորություն, ապա այլ օրգանների նկատմամբ պահանջարկը բավարարվում է բացառապես դոնորների կյանքի գնով, ինչը ենթադրում է հանցավոր սխեմաների կիրառում:

Ամենահամեստը հաշվարկներով, ամբողջ աշխարհում տարեկան իրականացվում է մարդկային օրգանների շուրջ 12,000 ապօրինի փոխապարվաստում, որից գոյացող հասույթը գնահատվում է մոտ 840 միլիոնից մինչև 1,7 միլիարդ ԱՄՆ դոլար:

XXI դարում, թվում է, մարդկանց ստրկացումն ու շահագործումը պատմական անցյալին բնորոշ «սարսափներ» են, որոնց մասին վկայությունների կարելի է հանդիպել միայն գրքերում և համապատասխան ժանրի ֆիլմերում, մինչդեռ Աշխատանքի համաշխարհային կազմակերպության և «Քայլի ազատ» հիմնադրամի գնահատականներով՝ 2016 թվականի տվյալներով, աշխարհում ժամանակակից ստրկատիրության զոհ է դարձել մոտ 40.3 միլիոն մարդ, որից 24.9 միլիոնը՝ իր կամքին հակառակ ենթարկվելով աշխատանքային շահագործման (այդ թվում՝ պարտքի դիմաց), իսկ 15.4 միլիոնը՝ «դատապարտվելով» հարկադիր



Աննա ՓԱԽԼՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2006 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՐՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն», իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2012 թ. պաշտպանել է թեկնածուական արեւնախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ է, «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի հրավիրյալ փորձագետ: Վերապատրաստվել և դասախոսություններ է վարել մի շարք եվրոպական բուհերում: Հեղինակ է 41 գիտական և 4 գիտահանրամատչելի վերլուծական աշխատանքների:

 ORCID ID <https://orcid.org/0000-0002-5854-2473>

գանների պակասուրդը համաշխարհային բնույթ է կրում, այդուհանդերձ, մարդկային օրգանների առևտուրն անօրինական է համարվում գրեթե բոլոր երկրներում: Թերևս, բացառություն է Իրանի Իսլամական Հանրապետությունը, որտեղ դեռևս 1988 թ. օրինականացվել է նյութական փոխհատուցման դիմաց երիկամի կամովի նվիրաբերումը կենդանի դոնորների կողմից: Ընդ որում, երիկամի դոնորական նվիրատվության դիմաց Իրանի կառավարությունը սահմանել է 1200 ԱՄՆ դոլարին համարժեք փոխհատուցում⁵ և բժշկական ապահովագրության ծառայություններից անվճար օգտվելու հնարավորություն, ինչը, սակայն, էապես զիջում է սև շուկայում առաջարկվող գներին (որոնք սկսվում են 14,000 ԱՄՆ դոլարից)⁶: Ուստի, լրացուցիչ շահադրդման նպատակով թույլատրվում են երիկամի դոնորներին հավելյալ գումարների կամ նվերների տրամադրում և, նույնիսկ, աշխատանքի տեղավորում՝ ստացողի կամ բարեգործական ընկերությունների կողմից:

Միաժամանակ, Իրանում երիկամի վաճառքի նկատմամբ գործում են ազգային և կրոնական բնույթի սահմանափակումներ. նմանատիպ գործարքները թույլատրվում են միայն երկրի ներսում և ԻԻՀ քաղաքացի հանդիսացող կողմերի միջև:

Օրգանների նկատմամբ կենսական պահանջարկը և դրանց առևտրի նկատմամբ գործող սահմանափակումները հանգեցրել են «փոխպատվաստումային զբոսաշրջության» ֆենոմենի տարածմանը: 2008 թ. ընդունված և 2018 թ. վերանայված⁷ «Օրգանների թրաֆիքինգի և փոխպատվաստումային զբոսաշրջության մասին ստամբուլյան հռչակագիրը» փոխպատվաստման նպատակով զբոսաշրջությունը բնորոշում

է որպես օրգանների, դոնորների, բուժառուների կամ փոխպատվաստման մասնագետների միջսահմանային տեղաշարժ: Ընդ որում, փոխպատվաստման համար ճամփորդությունը վերածվում է փոխպատվաստումային զբոսաշրջության, եթե այն ենթադրում է օրգանների թրաֆիքինգ և/կամ կոմերցիոն վաճառք, որի դեպքում անհրաժեշտ ռեսուրսների (օրգանների, մասնագետների և փոխպատվաստման կենտրոնների) օգտագործումն ի նպաստ օտարերկրացի բուժառուների իրականացվում է սեփական ազգաբնակչությանը փոխպատվաստման ծառայություններ մատուցելու՝ երկրի կարողությունների խափանման հաշվին⁸:

Փոխպատվաստումային զբոսաշրջության հայտնի կենտրոններ են Չինաստանը, Հնդկաստանը, Իրանը, Պակիստանը, Իրաքը, ԱՄՆ-ը, Կոլումբիան և Աֆղանստանը⁹: Չինաստանում օրգանների ապօրինի փոխպատվաստումների բիզնեսը «սնուցվում» է բանտարկյալների սպանություններով¹⁰:

Փոխպատվաստումային զբոսաշրջության տարածումը մասամբ նաև իրավական համակարգերի անկատարության հետևանք է, քանի որ օրգանների վաճառքը գրեթե ամենուր քրեորեն հետապնդվում է, սակայն դա չի վերաբերում այլ երկրներում օրգանների ձեռքբերման դեպքերին: Այսպես, ենթադրենք՝ զբոսաշրջիկն արտասահման է մեկնում դոնորի երկրում անհրաժեշտ օրգան գնելու և տեղում չգրանցված վիրահատական միջամտությամբ փոխպատվաստում իրականացնելու նպատակով: Եթե տվյալ երկրում օրգանների ապօրինի վաճառքի փաստը չբացահայտվի, ապա գնորդը, արդեն փոխպատվաստված օրգանով հանդերձ, սահմանը հատե-

⁵ Ghods U.J., Savaj S., Iranian Model of Paid and Regulated Living-Unrelated Kidney Donation. Clin J Am Soc Nephrol 1: 1136–1145, 2006. doi: 10.2215/CJN.00700206, p. 1141 [PubMed] [Google Scholar]

⁶ Channing May, Transnational Crime and the Developing World. Global Financial Integrity, March 2017, p. 104, <https://gfiintegrity.org/report/transnational-crime-and-the-developing-world>

⁷ The Declaration of Istanbul on Organ Trafficking and Transplant Tourism, <https://www.declarationofistanbul.org/about-the-declaration/history-and-development>

⁸ The Declaration of Istanbul on Organ Trafficking and Transplant Tourism, Turkey, Istanbul, May 2, 2008, <https://cjasn.asnjournals.org/content/3/5/1227#sec-10>

⁹ Ambagtsheer F., Zaitch D., Swaaningen R., Duijst W., Zuijdema W., Weimar W., Cross-Border Quest: The Reality and Legality of Transplant Tourism. Hindawi Publishing Corporation Journal of Transplantation Volume 2012, Article ID 391936, doi:10.1155/2012/391936, p. 3.

¹⁰ Doffman Zak, China Killing Prisoners To Harvest Organs For Transplant, Tribunal Finds. Forbes, June 18, 2019, <https://www.forbes.com/sites/zakdoffman/2019/06/18/china-killing-prisoners-to-harvest-organs-for-transplant-tribunal-finds/#42d38ff453d4>

լուց հետո ազատվում է քրեական հետապնդման սպառնալիքից, քանի որ ռեզիդենտության երկրի օրենքները վերաբերում են պետության տարածքում կատարված գործառնություններին և որևէ կերպ չեն տարածվում դրա սահմաններից դուրս օրգանների վաճառքի դեպքերի վրա¹¹:

Ինչևհետ, դոնորական օրգանների համաշխարհային ապօրինի առևտուրը վերածվել է վերագգային ահաբեկչության, դրա հետ միասին՝ կայուն և բարձր եկամուտ ապահովող բիզնեսի, որի գործունեությունը հիմնականում կենտրոնացված է պատերազմական գոտիներում և զինված հակամարտությունների օջախներում, որտեղ գերիներին օգտագործում են որպես «օրգանների մատակարարներ»՝ վերջիններիս «հավերժ հաշվեգրելով» անհայտ կորածների մատյաններում:

Միջնորդները գործում են բարդ և մասնագիտացած ցանցերի շրջանակում՝ օրգան վաճառողներին, ստացողներին և անհրաժեշտ բժշկական մասնագետներին ներգրավելով օրգանների թրաֆիքինգի ավանդական մոդելներում: Շատ դեպքերում դոնորը գործարքին մասնակցում է ինքնակամ, մինչդեռ գործնականում կիրառվում են նաև այլ սցենարներ, երբ դոնորները համաձայնում են գործարքի՝ ճշնման կամ պարտադրանքի պայմաններում: Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ օրգան վաճառողները ներգաղթյալներին և

փախստականներին հարկադրում են վաճառել իրենց երիկամը՝ որպես եվրոպական կամ այլ որևէ այլ պետության սահմանը հատելու դիմաց վճար: Նման իրավիճակներում հայտնված մարդիկ, ինչ խոսք, իրենք են շահագրգռված գործարքի գաղտնիության պահպանման մեջ:

Աղյուսակ 1-ում ներկայացված են դոնորական օրգանների ապօրինի առևտրի ծավալներն ու գներն ըստ յուրաքանչյուր օրգանի:

Երիկամն ամենատարածված օրգանն է թե՛ օրինական և թե՛ ապօրինի փոխապատվաստումներում, ու, թերևս, ամենաքիչն է թանկանում սև շուկայում, քանի որ դա կարող է ձեռք բերվել կենդանի դոնորից: մեկ առողջ երիկամը բավարար է մարդու կենսագործունեության ապահովման համար: Գուցե հենց դա է պատճառը, որ օրգանների փոխապատվաստման առևտրային գործարքների մոտ 67%-ը (տարեկան շուրջ 7995 հատ) բաժին է ընկնում երիկամներին: Վաճառքի ծավալներով հաջորդում են լյարդը (2615 հատ կամ մոտ 22%), սիրտը (654 հատ կամ մոտ 5.5%), թոքը (469 հատ կամ մոտ 4%) և ենթաստամոքսային գեղձը (233 հատ կամ մոտ 2%): Բնականաբար, ներկայացված տվյալները չեն կարող արտացոլել լիարժեք պատկերը, քանի որ ապօրինի փոխապատվաստումներն իրականացվում են կազմակերպված հանցավորության և հույժ գաղտնիության պայ-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Դոնորական օրգանների ապօրինի առևտրի հիմնական ցուցանիշները¹²

Օրգան	Ապօրինի փոխապատվաստումների տարեկան քանակ	Գների միջակայքը (ԱՄՆ դոլար) ¹³
Երիկամ	7,995	50,000 – 120,000
Լյարդ	2,615	99,000 – 145,000
Սիրտ	654	130,000 – 290,000
Թոք	469	150,000 – 290,000
Ենթաստամոքսային գեղձ	233	110,000 – 140,000
ԸՆԴԱՄԵՆԸ	11,966	840 մլն – 1.7 մլրդ

¹¹ Ambagtsheer F., Zaitch D., Swaaningen R., Duijst W., Zuiedema W., Weimar W., Cross-Border Quest: The Reality and Legality of Transplant Tourism. Hindawi Publishing Corporation Journal of Transplantation Volume 2012, Article ID 391936, doi:10.1155/2012/391936, p. 4.

¹² Channing May, Transnational Crime and the Developing World // Global Financial Integrity, March 2017, p. 29, <https://gfiintegrity.org/report/transnational-crime-and-the-developing-world/>

¹³ Որպես գների միջակայքի սահմաններ՝ ընդունվել են առաջին քվանտիլի (25%) վերին և չորրորդ քվանտիլի (75%) ստորին արժեքները՝ առավել բարձր հավաստիության և կրկնվող արժեքների հիմք ընդունման հիմնավորմամբ, ինչը նշանակում է, որ գոյություն ունեն նաև ներկայացված գնային միջակայքերի ստորին շենը զիջող և վերին շենը գերազանցող արժեքներ:



մաններում: Գնային առումով, համեմատաբար թանկ են սիրտն ու թոքը՝ ընդհուպ 290,000 ԱՄՆ դոլար յուրաքանչյուրը:

Օրգանների փոխապատվաստման գներն էապես տարբերվում են ըստ օրգանի տեսակի, փոխապատվաստման վիրահատությունն իրականացնող երկրների և, որ ամենահետաքրքիրն է, ըստ դոնորի և փոխապատվաստվողի ազգության կամ քաղաքացիության: Այսպես, օրինակ, սև շուկայում համեմատաբար մատչելի գնով հնարավոր է ձեռք բերել Պակիստանի (14,000 ԱՄՆ դոլար), Լիբանանի (15,000 ԱՄՆ դոլար) կամ Իրաքի (20,000 ԱՄՆ դոլար) քաղաքացու երիկամ, մինչդեռ ճապոնացու և կանադացու նույն օրգանն արժե 100,000

ԱՄՆ դոլար: Նույն կերպ, ՀԱՀ-ում, ԱՄՆ-ում և Իսրայելում երիկամի գինը սկսվում է 120,000 ԱՄՆ դոլարից, իսկ ամենաթանկը Սինգապուրի քաղաքացունն է՝ 237,000 ԱՄՆ դոլար (աղյուսակ 2):

Գների նմանօրինակ տարբերակումը չափազանց ուշագրավ է, իսկ առավել հետաքրքիր են դրա պատճառները: Տարբեր վարկածների դիտարկման արդյունքում առավել խելամիտ է թվում մարդկային օրգանների գների փոխկապակցվածությունը դոնորների ծագման երկրների զարգացման աստիճանի և դրանցում բնակչության կենսամակարդի հետ, քանզի կյանքի բարձր որակը ենթադրում է առողջապահական ապահովագրության և այլ սոցիալական ծառայություններից օգտվելու հնարավորություն, ինչը կարևոր երաշխիք է դոնորական օրգանների առողջության համար: Ուստի, փորձել ենք օրգանների գները համեմատել դրանք «մատակարարող» երկրներում բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար) (2019 թ.)¹⁵: Որքան էլ զավեշտալի է հնչում, բայց դիտարկվող երկրների մեծ մասի դեպքում նկա-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Երիկամի դոնորներին վճարված գումարները որոշ երկրներում¹⁴

Երկիր	Գումար (ԱՄՆ դոլար)	Բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար) (2019 թ.) ¹⁵
Պակիստան	14,000 - 60,000	1,284.7
Լիբանան	15,000	7,784.3
Իրաք	20,000	5,955.1
Հնդկաստան	25,700	2,104.1
Ինդոնեզիա	30,000 - 47,000	4,135.6
Չինաստան	32,000 - 85,000	10,261.7
Շրի Լանկա	53,000 - 122,000	3,853.1
Ֆիլիպիններ	60,000 - 85,000	3,485.1
Ճապոնիա	100,000	40,246.9
Կանադա	100,000	46,194.7
Թուրքիա	100,000 - 145,000	9,042.5
Հարավային Աֆրիկա	120,000	6,001.4
ԱՄՆ	120,000 - 150,000	65,118.4
Իսրայել	120,000 - 200,000	43,641.4
Մեքսիկա	125,000	9,863.1
Սինգապուր	237,000	65,233.3

¹⁴ Channing May, Transnational Crime and the Developing World // Global Financial Integrity, March 2017, p. 104, <https://gfintegrity.org/report/transnational-crime-and-the-developing-world/>
¹⁵ World Bank, GDP per capita (current US\$) <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD>

տելի է նման օրինաչափություն: Այսպես՝ դիտարկվող երկրների ցանկում բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշն ամենաբարձրն է ամենաթանկարժեք երիկամների «ծննդավայր» Սինգապուրում: Այդպիսի համաչափություններ են դրսևորվում նաև ԱՄՆ-ի, Իսրայելի, Կանադայի և Ճապոնիայի պարագայում: Միաժամանակ, սև շուկայում դոնորական երիկամների առավել մատչելի գներն առաջարկվում են բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ համեմատաբար ցածր ցուցանիշով բնորոշվող երկրներում՝ Պակիստան, Հնդկաստան:

Միևնույն ժամանակ, բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակի համեմատ չարդարացված բարձր գներով են բնորոշվում Շրի Լանկայի, Թուրքիայի, Հարավային Աֆրիկայի և Մեքսիկայի սև շուկաներում առաջարկվող դոնորական երիկամները:

Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին իրականացվել է կենդա-

նի դոնորների երիկամի 20 և լյարդի 3 փոխպատվաստում¹⁶ հավանաբար, հարազատների կամավոր դոնորության պայմաններում: Իսկ հանգուցյալ դոնորների օրգանների փոխպատվաստման փորձ դեռևս երկրում չի արձանագրվել, թերևս, իրավական և ենթակառուցվածքային համապատասխան հիմքերի բացակայության պատճառով:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ մարդկային օրգանների ապօրինի առևտրում միախառնված են վերազգային ահաբեկչության և մարդասիրության տարրեր. մի կողմից օրգանների հայթայթման համար խեղվում են կյանքեր, իսկ մյուս կողմից՝ դրանք վաճառվում են՝ հանուն այլոց փրկության:

Ուստի, երևույթի մարդասիրական և բարոյահոգեբանական կողմերի քննությունը թողնում ենք ընթերցողի հայեցողությանը:

¹⁶ GODT – Global Observatory on Donation and Transplantation database, Country data, Armenia <http://www.transplant-observatory.org/summary/> (մուտքի ամսաթիվ՝ 16.09.2020):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ambagtsheer F., Zaitch D., Swaaningen R., Duijst W., Zuiedema W., Weimar W., Cross-Border Quest: The Reality and Legality of Transplant Tourism. Hindawi Publishing Corporation Journal of Transplantation. Volume 2012, Article ID 391936, doi:10.1155/2012/391936, p. 3-4.
2. Channing May, Transnational Crime and the Developing World. Global Financial Integrity, March 2017, p. xii, 29, 104, <https://gfindtegrity.org/report/transnational-crime-and-the-developing-world/>
3. Doffman Zak, China Killing Prisoners To Harvest Organs For Transplant, Tribunal Finds. Forbes, June 18, 2019, <https://www.forbes.com/sites/zakdoffman/2019/06/18/china-killing-prisoners-to-harvest-organs-for-transplant-tribunal-finds/#42d38ff453d4>
4. Ghods U.J., Savaj S., Iranian Model of Paid and Regulated Living-Unrelated Kidney Donation. Clin J Am Soc Nephrol 1: 1136 –1145, 2006, doi: 10.2215/CJN.00700206, p. 1141 [PubMed] [Google Scholar]
5. GODT – Global Observatory on Donation and Transplantation database, Country data, Armenia, <http://www.transplant-observatory.org/summary/>
6. International Labour Organization and Walk Free Foundation, Global Estimates on Modern Slavery: Forced Labour and Forced Marriage, Geneva, 2017, pp. 9-10, https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/documents/publication/wcms_575479.pdf
7. OPTN, National data, Removal Reasons by Year, Removed from the Waiting List, January, 1995 - August 31, 2020, <https://optn.transplant.hrsa.gov/data/view-data-reports/national-data/#>
8. Organ Procurement and Transplantation Network, <https://optn.transplant.hrsa.gov/data/>
9. The Declaration of Istanbul on Organ Trafficking and Transplant Tourism, <https://www.declarationofistanbul.org/about-the-declaration/history-and-development>
10. The Declaration of Istanbul on Organ Trafficking and Transplant Tourism, Turkey, Istanbul, May 2, 2008, <https://cjasn.asnjournals.org/content/3/5/1227#sec-10>
11. World Bank, GDP per capita (current US\$), <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD>

Анна ПАХЛЯН*Приглашенный эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук, доцент*

А ВЫ ЗНАЕТЕ, ЧТО...?

**НЕЛЕГАЛЬНАЯ ТРАНСПЛАНТАЦИЯ ЧЕЛОВЕЧЕСКИХ ОРГАНОВ:
БИЗНЕС ИЛИ ТЕРРОРИЗМ?**

Жизненная потребность в донорских органах и очевидные расхождения между спросом и предложением на них привели к развитию транснационального бизнеса по незаконной поставке органов и их трансплантации. И если в случае трансплантации почек и печени живое донорство возможно на добровольной основе или насильно, то потребность в других органах удовлетворяется исключительно за счет жизни доноров, что предполагает использование криминальных схем.

По самым скромным подсчетам, во всем мире ежегодно проводится около 12 тысяч незаконных трансплантаций органов, доход от которых оценивается примерно в 840–1,7 миллиарда долларов США.

Ключевые слова: *человеческие органы, нелегальная продажа, черный рынок трансплантологии, "красный рынок", трафикинг, трансплантационный туризм*

Anna PAKHLYAN*Invited expert of «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics, Associate Professor*

DO YOU KNOW THAT...?

ILLEGAL TRANSPLANTATION OF HUMAN ORGANS: BUSINESS OR TERRORISM?

The vital need for donor organs and the apparent discrepancies between supply and demand for them have led to the development of a transnational business of illegal organ supply and transplantation. And, if in the case of kidney and liver transplantation, live donation is possible on a voluntary basis or by force, then the demand for other organs is met exclusively at the cost of donors' lives, which implies the use of criminal schemes.

According to the most modest estimates, about 12,000 illegal organ transplants are performed annually all over the world, the revenue from which is estimated at about 840 million to 1.7 billion US dollars.

Keywords: *human organs, illegal trade, transplantation black market, "red market", trafficking, transplant tourism*